

Բ. Ս. ՍԵՆՎԻՆԱՉՅԱՆ, ԱՐՄԱՊՐԱԿԱՆ ՌԵՍՈՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԽՆԵՍԱԿԱՆ ԳՆԱՏԱՊԱՐԿՈՒՄԸ ԱՐԴՅՈՒՆԱՏԱՆՈՂ ԱՐԴՅՈՒՆԱՐԵՐՈՒՄԻ ՄԵՋ, ՀՍՍՀ ԳԱՀՐԱՏԱՐԱԿՆԵՐՈՒՄ, ԵՐԵՎԱՆ, 1979, 170 էջ:

Հասարակական արտադրության բարձր արդյունավետություն ապահովող և երկրի էկոնոմիկայի ընդլայնված վերարտադրության ընթացքը պայմանավորող հիմնական ուղիներից մեկն արտադրական ռեսուրսների ռացիոնալ օգտագործումն է: Դա հատկապես բնորոշ է արդյունաբերության արդյունահանող ճյուղերին, որոնք կոչված են ժողովրդական տնտեսության զարգացման բարձր տեմպերն ապահովելու համար անընդհատ ավելացնել ընդերքից արդյունահանվող օգտակար հանածոների ծավալը և ստեղծել հանքային հումքի հուսալի ռադա:

Արդյունաբերության այս ճյուղերում արտադրության արդյունավետությունը պայմանավորված է աշխատանքային, բնական, նյութական և ֆինանսական ռեսուրսների հատույցի մակարդակով: Արդյունահանող արդյունաբերության մեջ այդ ռեսուրսներից յուրաքանչյուրի օգտագործումը ներկայումս բնութագրվում է ուրույն, միակողմանիորեն արտադրող ցուցանիշներով (աշխատանքի արտադրողականություն, արտադրանքի նյութատարություն, ֆոնդատարություն, կապիտալատարություն և այլն), որոնք շատ հաճախ հաշվի չեն առնում դիտարկվող ճյուղերի առանձնահատկությունները:

Ձևայած վերջին տասնամյակի ընթացքում վերահիշյալ արտադրական ռեսուրսների օգտագործման տնտեսական համակողմանի գնահատմանը վերաբերող հետազոտությունների անհամեմատ ավելանալուն, հարցը դեռևս վերջնականապես լուծված չէ: Այդ հետազոտությունների շարքում քիչ են այնպիսիք, որոնցում անհրաժեշտ խորությամբ քննվել են արդյունաբերության արդյունահանող ճյուղերում հիմնական արտադրական ֆոնդերի վերարտադրության, կապիտալ ներդրումների արդյունավետության գնահատման, հումքի համալիր օգտագործումը տնտեսապես հիմնավորելու և համալիրության մակարդակը որոշելու, բնորոշի հարստությունների ռացիոնալ օգտագործումը տնտեսապես խթանելու և այլ պրոբլեմներ: Այս տեսակետից զրախոսվող աշխատանքի հրատարակումը միանգամայն ժամանակին է և, անկասկած, կնպաստի վերը թվարկված պրոբլեմների լուծմանը:

Արդյունաբերության արդյունահանող ճյուղերում կապիտալ ներդրումների արդյունավետության գնահատման պրոբլեմից զրքում առավել մանրամասն քննված են կապիտալ ներդրումների արդյունավետության չափանիշի և ցուցանիշների ընտրության, ընդերքի հարստությունների համալիր օգտագործման պայմաններում կապիտալ ներդրումների արդյունավետության որոշման, արդյունավետության հաշվարկներում ժամանակի գործոնի հաշվառման մեխանիզմի հետազոտարեկազմման և այլ հարցեր: Գրքում նշվում է, որ միևնույն տնտեսական խնդրի լուծման դեպքում, զրա տարբեր փուլերում (մինչև խաղաղության, նախագծային, պլանավորման, փաստացի) հաշվի առնելով կատարվելիք կապիտալ ներդրումների հիմնական նպատակը, այդ համակարգի ցուցանիշներից մեկը պետք է առանձնացվի որպես հիմնական, զլխավոր, իսկ մյուսները՝ օժանդակ, ճշտող, կարգավորող: Ղեկավարվելով այս սկզբունքով, հիմնավորվում է այն մոտեցումը, ըստ որի արդյունաբերության արդյունահանող ճյուղերում կապիտալ ներդրումների արդյունավետությունը գնահատելիս ինչպես հանքավայրերի յուրացման մինչև խաղաղության փուլում, այնպես էլ հետագայում տարրերակների համեմատումը և դրանցից լավագույնի ընտրությունը պետք է իրազդեցիկ թլրիվ ներդրումների բացարձակ արդյունավետության ցուցանիշով (այն համեմատելով համապատասխան նորմատիվային մեծության հետ)» (էջ 33):

Արդյունահանող ճյուղերում միանվագ ծախսումների արդյունավետության գնահատման համադրելիությունը և ճշտությունն ապահովելու համար զրքում հանձնարարվում է ավելի մեծ ուղադրություն դարձնել այդ ծախսերի կազմի և կառուցվածքի վրա: Դա բացատրվում է նրա-

ձեռք, որ արդյունաբերության արդյունահանող ճյուղերում միևնույն խնդրի լուծման տարբերակներում կապիտալ ներդրումների կազմը մեծ մասամբ խիստ տարբեր է (հարակից ճյուղերի տարբեր շրջանակի միանվագ ու ընթացիկ ծախսերը հաշվի առնելու աստիճանով, ընդերքի ռեսուրսների օգտագործման ինտենսիվության մակարդակով, շրջակա միջավայրը աղտոտումից պահպանելու ծախսերի տարբերության և այլ տեսանկյուններով)։ Այս առնչությամբ հեղինակի առաջարկած հանձնարարականները հիմնավոր են և ընդունելի։

Հաշվի առնելով արդյունահանող ճյուղերում արտադրության առանձնահատկությունները և հանքավայրերի շահագործման ամբողջ ժամանակաշրջանում ընդերքի հարստությունների օգտագործումից ստացվող էֆեկտի փոփոխությունը, առաջարկվում է կապիտալ ներդրումների արդյունավետության հաշվարկներում ժամանակի դործոնի հաշվառման ուշաբժան հղանակ։

Դրախոսվող աշխատությունում հատուկ ուշադրության է արժանացել նաև հումքի համալիր օգտագործման պայմաններում կապիտալ ներդրումների արդյունավետության գնահատման հարցը։ Համակցված արտադրության բաղադրիչների միջև միանվագ և ընթացիկ ծախսերի բաշխման առաջարկվող մեթոդների կիրառման դեպքում հնարավոր կդառնա կապիտալ ներդրումների արդյունավետությունը գնահատել ոչ միայն ամբողջությամբ համակցության, այլև նրա առանձին բաղադրիչների արտադրությունը կազմակերպելու և արդյունավետությունը որոշելու համար։

Անդրադառնալով արդյունահանող արդյունաբերության հիմնական արտադրական ֆոնդերի օգտագործման արդյունավետությանը, հեղինակը ցույց է տվել հիմնական ֆոնդերի վերարտադրական և տեխնոլոգիական կառուցվածքի առանձնահատկությունները, ֆոնդերի նորացման տեմպերի արագացման նպատակահարմարությունը և արդյունավետության գնահատման մեխանիզմի կատարելագործման անհրաժեշտությունը։ Այդ առումով ուշաբժան են հիմնական արտադրական ֆոնդերի արդյունավետության մակարդակի վրա բնական գործոնների (օրինակ՝ հանքանյութի արդյունավետության փոփոխություն) ունեցած ազդեցությունը հաշվի առնող հաշվարկների հանձնարարվող հղանակները։

Հեղինակն ուշադրավ փաստերով ցույց է տալիս, որ հանածո հումքի համալիր օգտագործման բնագավառում վերջին տասնամյակում ձեռք բերված անժխտելի նվաճումներն ամենեին չեն սպառել ընդերքից արդյունահանվող հումքի համալիր օգտագործումն ընդլայնելու և խորացնելու հնարավորությունները։ Դեռ մեծ են օգտակար հանածոների կորուստներն ինչպես դրանց արդյունահանման, այնպես էլ հետագա մշակման փուլերում։ Դասակարգելով ընդերքից օգտակար հանածոների արդյունահանման և հետագա մշակման փուլերում հանքանյութի և օգտակար բաղադրիչների կորուստները, Բ. Սելվինսոնը ընդերքի շահագործման ներառյալիս տնտեսական մեխանիզմը կատարելագործելու կոնկրետ առաջարկություններ է անում։ Մասնավորապես նա առաջարկում է ընդերքում հումքի հետախուզված պաշարների համար գին սահմանել, որը կդառնա ընդերքի հարստությունների ռացիոնալ օգտագործումը կարգավորող հիմնական տնտեսական լծակներից մեկը։ Դրա հետ մեկտեղ հեղինակն իրավացիորեն գտնում է, որ ժամանակն է ընդերքի հարստությունները շահագործող ձեռնարկությունների համար սահմանել հանքանյութի բացարձակ, կորզվելիք և փաստացի արժողություններն արտացոլող այնպիսի ցուցանիշներ, որոնց համադրման միջոցով հնարավոր լինի որոշել հանածո հումքի օգտագործման բացարձակ, օպտիմալ, փաստացի վիճակը և այլն։

Բ. Սելվինսոնի գրախոսվող աշխատությունը զերծ չէ նաև թերություններից։ Այսպես, ընդգծելով արդյունահանող արդյունաբերության մեջ արտադրության բարձր աշխատատար լինելը, հեղինակը չի քննում աշխատանքային ռեսուրսների օգտագործման հարցերը։ Մեր կարծիքով աշխատությունը մեծապես կշահեր, եթե, վերը թվարկվածից բացի, առավել մանրամասն քննվեին բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման պրոբլեմի հետ առնչվող նաև այլ հարցեր։

Ներափակելով նշենք, որ մեթոդաբանական ճիշտ ելակետը հեղինակին հնարավորություն է տվել ստեղծելու արժեքավոր աշխատություն՝ նվիրված արդյունահանող արդյունաբերության մեջ արտադրական ռեսուրսների օգտագործման և դրանց տնտեսական գնահատման մեթոդաբանական հարցերին։

ՏՖՍՍԱԳԻՒՄՅԱՆ ՔԵԼՆԱԾՈՒ
ԷՄԻԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ